## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » հունվարի 2024թ. № 14-Ն

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 18.01.2024 թվականի թիվ 3-Ն որոշման՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

**1.** Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

**2.** Հաստատել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների 2024թ. բյուջեի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2024թ. հունվարի 24**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » հունվարի 2024թ. № 15-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասինե Լոռի Բերդ համայնքի անագանու 27.12.2023թ. թիվ 84-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետի՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-01-01 դասակարգմամբ ,կառավարման ապարատի նախահաշվի 4241 հոդվածով սահմանված 900.000 (ինը հարյուր հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.
1-ին եռամսյակ – 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 700.000 (յոթ հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 900.000 (ինը հարյուր հազար դրամ,
4-րդ եռամսյակ – 900.000 (ինը հարյուր հազար դրամ:

1.2. 01-01-01 դասակարգմամբ ,կառավարման ապարատի նախահաշվի 4237 հոդվածով սահմանված 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը ըստ եռամսյակների պահմանել հետևյալ չափերով.
1-ին եռամսյակ – 200.000 (երկու հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.000.000 (մեկ միլիոն) դրամ,
4-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

**2024թ. հունվարի 25**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » հունվարի 2024թ. № 16-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7–րդ և 8–րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Ուռուտ բնակավայրում գտնվող 06-105-0350-0004 ծածկագրով 0.83888հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի խոտհարքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2024թ. հունվարի 25**
գ. Լոռի Բերդ